ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԿԱՆԱՎՈՐ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ

(Լ. Մ. Կարախանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Հ. Յ. ԼԻԼՈՅԱՆ

Խորհրդային դիվանագիտության պատմության մեջ Լևոն Միքայելի Կարախանը (Կարախանյանը) իրավամբ առանձնահատուկ տեղ է գրավում։ Նրա անվան հետ է անխզելիորեն կապված խորհրդային դիվանագիտության առաջին 20 տարիների պատմությունը։ Բրեստի հաշտությունն ու երիտասարդ խորհրդային պետության մերձավոր հարևանների հետ հարաբերությունների կարգավորումը, Արևելքի երկրների հետ իրավահավասար բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, մասնակցությունը արտաքին քաղաքական ապարատի՝ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ստեղծմանը, խորհրդային դիվանագիտական և հյուպատոսական ծառայության աշխատանքը կանոնակարգող կարևորագույն շատ փաստաթղթերի նախապատրաստումը՝ այս ամենը սերտորեն շաղկապված է Լևոն Կարախանի անվան հետ։

* * *

Խորհրդային կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի սկզբներին ձեռնամուխ եղավ Բրեստ-Լիտովսկում կայանալիք առաջիկա հաշտության բանակցություններում պատվիրակության կազմի ընտրությանը։ Վ. Ի. Լենինը և Յա. Մ. Սվերդլովը ի դեմս Կարախանի տեսնում էին ընդունակ, կրթված և հեղափոխության գործին նվիրված գործչի։ Ուստի, երբ կազմավորվեց մեր պատվիրակությունը, Կարախանի անունը գրվեց առաջինների թվում։

Բրեստի բանակցությունների բարդ իրադրության մեջ Կարախանը հանդես է բերում բացառիկ կամք, կայունություն և նվիրվածություն կուսակցության գործին։ Այսպես սկսվեց Լ. Մ. Կարախանի դիվանագիտական գործունեությունը։ Լինելով հաշտության խորհրդային պատվիրակության քարտուղարը, Կարախանը մշտապես Վ. Ի. Լենինին տեղեկություններ էր հաղորդում բանակցությունների ընթացքի մասին։

Գ. Վ. Չիչերինը, Լ. Մ. Կարախանը և պատվիրակության մյուս անդամները հաջողությամբ են կատարում Կենտրոնական կոմիտեի առաջադրանքը՝ ստորագրում են պատերազմը դադարեցնելու վերաբերյալ Բրեստի հաշտության պայմանագիրը։

Երիտասարդ խորհրդային հանրապետության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը աշխատում էր գրեթե գիշեր-ցերեկ։ Կոմիսարիատի աշխատակիցների վրա դրված էր վիթխարի պատասխանատվություն. հարկավոր էր ամենաբարդ պայմաններում ապահովել երիտասարդ հանրապետության արտաքին քաղաքական ապարատի հստակ աշխատանքը։

Հատկապես մեծ աշխատանք կատարեց ժողովրդական կոմիսար Չիչերինը։ Ժողկոմի լավագույն ընկերը, նրա տեղակալը երեսնամյա Լև Կարախանն էր։ 1918 թ. սկզբից Լ. Մ. Կարախանը արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի կազմում էր, իսկ նույն թվականի մարտին նշանակվում է արտգործկոմի տեղակալ։ Ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինի հետ միասին Լ. Մ. Կարախանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ժողկոմատի կազմակերպման աշխատանքներին։ Հաղթահարելով վիթխարի դժվարություններ, Արտգործժողկոմատը Վ. Ի. Լենինի չթուլացող ուշադրության պայմաններում ուժ ու եռանդ է հավաքում Չիչերինի, նրա

տեղական Կարախանի ղեկավարությամբ և շուտով դառնում օրինակելի հիմնարկություն։ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատում Լ. Մ. Կարախանը զբաղվում էր կադրերի ընտրության ու տեղաբաշխման, տնտեսական հարցերով, արձանագրություններով և արտաքին քաղաքական ապարատի բազմաթիվ այլ խնդիրներով։

Մշտական անձնական կապերը Վլադիմիր Իլյիչի հետ, դանազան արտաքին-քաղաքական հարցերի համատեղ քննարկումները Լ. Մ. Կարախանին օգնեցին յուրացնելու աշխատանքի լենինյան ոճը և դառնալու խորհրդային խոշոր դիվանագետ, որին կուսակցությունը ուղարկում էր դիվանագիտական ճակատի ամենավճռական տեղամասերը։ Ժողկոմ Գ. Վ. Չիչերինը բարձր էր գնահատում Լ. Մ. Կարախանին։ Ահա թե ինչ է գրում նա Վ. Ի. Լենինին իր տեղակալի մասին. «Մինչև այժմ մեզ հարկ է եղել միանգամայն անբավարար ուժերով և ապարատի պրիմիտիվ սաղմով գլուխ բերել վիթխարի աշխատանք։ Ես կարող եմ համարձակորեն ասել, որ մեզ խեղդող խիստ պատասխանատու քաղաքական աշխատանքում վերջին ամիսների մեր պայքարը մի շարք պետությունների հետ հարաբերությունների դարգացման պայմաններում, ուղղակի հերոսական էր։ Մենք ի վիճակի եղանք դրանից գլուխ հանել միայն շնորհիվ այն բանի, որ ընկ. Կարախանի հետ բացարձակապես համերաշխ եղանք, քանի որ կես խոսքից իրար հասկանում ենք առանց ժամանակ կորցնելու դատողությունների վրա և առանց դժվարության բաշխում ենք աշխատանքը, բացարձակապես ընտելացել ենք բաժանել այն միմյանց միջև։ Մի խոսքով, ես կատարում եմ ավելի ընդհանուր քաղաքական աշխատանքը, իսկ նա՝ մանրամասնությունների մի ծով աշխատանք, որոնցից նա կարողանում է գլուխ հանել միայն գործերում արագ և հեշտ կողմնորոշվելու և դրանք ընդգրկելու իր հիանալի ընդունակության, իր պարզ, առողջ դատողության և հիանալի քաղաքական հոտառության շնորհիվ, որը նրան բացարձակապես անփոխարինելի է դարձնում այդ բնագավառում»[1]։

1918 թվականին խորհրդային պետության արտաքին քաղաքական դրությունը արտակարգ բարդ էր։ Երիտասարդ խորհրդային պետությանը հարկ եղավ պայքար կազմակերպել ոչ միայն ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի իմպերիալիստների ինտերվենցիայի, այլև գերմանական ինտերվենցիայի դեմ։ Այդ դժվարին պահին մեծ ուշադրություն դարձնելով ընդհանուր քաղաքական հարցերին, Լ. Մ. Կարախանը հսկայական շահագրգռվածություն հանդես բերեց Անդրկովկասի գործերի դրության նկատմամբ։

1918 թ. ապրիլի 12-ին արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Գ. Վ. Չիչերինի և Լ. Մ. Կարախանի ստորագրությամբ Գերմանիայի արտաքին գործերի մինիստրին ուղարկեց հետևյալ նոտան. «Թուրքական զորքերի հարձակումը Կովկասյան ճակատում ուղեկցվում է հայ բնակչության մասսայական բնաջնջմամբ. խաղաղ բնակչությունը, կանայք և երեխաները սպանվում են հազարներով, նրանց ունեցվածքը կողոպուտի և հրի է մատնվում։ Այն պայմանագիրը, որ մենք հարկադրված եղանք ստորագրելու Բրեստում, Արդահանի, Ղարսի և Բաթումի օկրուգների բնակչության բախտը թողեց բուն բնակչության կամքին։ Այդ օկրուգներում տեղի ունեցած դեպքերը վկայում են, որ հայ ժողովրդի բնաջնջման՝ տասնյակ տարիներով կիրառվող քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ։ Թուրքական ռազմաճակատներում գերակշռությունը Ռուսաստանի կողմն էր, որը հարկադրված եղավ Արդահանը, Ղարսը, Բաթումը հանձնել միայն այն պատճառով, որ Թուրքիայի դաշնակիցը Գերմանիան էր։

Պատասխանատվությունը այն սարսափների համար, որոնց ենթարկվում է հայ ժողովուրդն այժմ թուրքական զորքերի գրաված օկրուգներում, ընկ-

[1] Видные советские коммунисты—участники китайской революции. М., 1970, с. 8.

նում է գերմանական կառավարության վրա, որի ուղղակի օգնությամբ Թուրքիան յուրացրել է այդ օկրուգները»։

Բաքվի վրա թուրքական զորքերի հարձակման կապակցությամբ Արտգործժողկոմատը 1918 թ. սեպտեմբերի 20-ին Թուրքիայի արտաքին գործերի մինիստրությանը ուղարկեց Կարախանի կազմած նոտան։ Նրանում նշվում էր, որ 1918 թվականի մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը նոր տերիտորիալ-քաղաքական հարաբերություններ է հաստատել Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Նախկինում Ռուսաստանյան հանրապետության կազմի մեջ մտնող Ղարսի, Արդահանի, Բաթումիի բնակչությանը իրավունք տրվեց «նոր կարգ հաստատել հարևան պետությունների, հատկապես Թուրքիայի հետ»։ Արտգործժողկոմատի նոտան վճռականորեն դատապարտում էր թուրքական զինվորականության անօրինականությունները անպաշտպան հայ բնակչության նկատմամբ։

Ինչպես հայտնի է, Թուրքիան 1920 թ. նոր ագրեսիա սկսեց Անդրկովկասի և հատկապես Հայաստանի դեմ։ Այդ դժվարին օրերին խորհրդային կառավարությունը, մտահոգված լինելով հայ ժողովրդի բախտով և Ադրբեջանի ու Վրաստանի համար ստեղծված վտանգով, միջնորդության առաջարկություն արեց։ Առաջարկությունների նախապատրաստմամբ զբաղվեց արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Լ. Մ. Կարախանի ակտիվ մասնակցությամբ։

Մեծ է Լ. Մ. Կարախանի դերը հարևան երկրների՝ հատկապես Արևելքի երկրների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու գործում։

1919 թ. ապրիլին արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Լ. Մ. Կարախանի վրա դրեց Արևելյան բաժնի ղեկավարությունը։ 1919—1920 թթ. արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը նրա անմիջական մասնակցությամբ մի շարք դիմումներ մշակեց՝ ուղղված Արևելքի ժողովուրդներին, որոնցում մանրամասնորեն շարադրված է խորհրդային պետության արտաքին քաղաքականությունը։

Պարսից կառավարությանը և ժողովրդին ուղղված ՌԽՖՍՀ կառավարության դիմումի մեջ, որն ստորագրվել է Լ. Մ. Կարախանի կողմից 1919 թ. հունիսի 26-ին, ասված է, որ «Արտգործժողկոմատը պարսից ժողովրդին տեղյակ է պահել Պարսկաստանի նկատմամբ խորհրդային Ռուսաստանի քաղաքականության գլխավոր սկզբունքների մասին»։

1919 թ. հունիսի 25-ին հրապարակվեց ՌԽՖՍՀ կառավարության հայտնի դիմումը չին ժողովրդին և Հարավային ու Հյուսիսային Չինաստանի կառավարություններին։ Այդ կարևորագույն փաստաթղթերի տակ դրված էր Լ. Մ. Կարախանի ստորագրությունը։

Խորհրդային կառավարության անունից Լ. Մ. Կարախանը հարաբերությունների մեջ մտավ կապիտալիստական երկրների խոշոր գործիչների հետ՝ վճռականորեն պաշտպանելով երիտասարդ խորհրդային հանրապետության շահերն ու իրավունքները, հանրապետություն, որին դեռևս չէին ճանաչում իմպերիալիստական խոշոր տերությունները։

Լ. Մ. Կարախանի դիվանագիտական բազմաբեղուն գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում Հեռավոր Արևելքը և մասնավորապես Չինաստանը։ Չինաստանում իր աշխատանքի ընթացքում Լ. Մ. Կարախանը ղեկավարվել է Վ. Ի. Լենինի ցուցումներով այն մասին, որ «պայքարի ելքը, վերջին հաշ-

վով, կախված է այն բանից, որ Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և այլն կազմում են բնակչության մեծամասնությունը»։

Կարախանի կողմից ստորագրված ՌԽՍՀ կառավարության վերը նշված դիմումը՝ ուղղված չին ժողովրդին և Հարավային ու Հյուսիսային Չինաստանի կառավարություններին, հանդիսանում է երիտասարդ խորհրդային հանրապետության առաջին ծրագրային փաստաթուղթը Չինաստանի նկատմամբ։

Այդ ժամանակ խորհրդային կառավարության առաջարկությունները չայն արձագանք գտան ոչ միայն Չինաստանում, այլև նրա սահմաններից դուրս։ Խորհրդային առաջարկությունները պատմության մեջ մտան որպես «Կարախանի դեկլարացիա»[2]։

1923 թ. սկզբին հիվանդության պատճառով Չինաստանից վերադարձավ Պեկինում խորհրդային դիվանագիտական միսիայի ղեկավար Ա. Ա. Իոֆֆեն։ Ժողկոմ Գ. Վ. Չիչերինի առաջարկությամբ Չինաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Պեկին բանակցությունների ուղարկվեց Լ. Կարախանը։ Պեկինում խորհրդային ներկայացուցիչը հանդես է գալիս զեկուցումներով, ճառերով և հարցազրույցներով, որոնցում չին ժողովրդին բացատրում է խորհրդային կառավարության քաղաքականությունը արևելյան պետությունների և ժողովուրդների նկատմամբ։ ԽՍՀՄ-ի և Չինաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապատրաստության ընթացքում ծավալված իր գործունեության մեջ Կարախանը հենվել է չին ժողովրդի ռեալիստորեն մտածող առաջավոր գործիչների վրա։ Դա հատկապես երևում է չին ժողովրդի մեծ զավակ Սուն Յաթ Սենի հետ նրա բարեկամության օրինակով։ Պեկին ժամանելով, Կարախանը Սուն Յաթ Սենի անունով. այն ժամանակ կազմավորվող Հարավային Չինաստանի կառավարությանը հղում է հետևյալ հեռագիրը. «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը ինձ ուղարկել է Ձեր երկիրը, նկատի ունենալով մեր երկու երկրների ընդհանուր շահերը իրականացնելու անկեղծ ցանկությունը, դրանք ամուր, անխախտելի հիմքի վրա իրականացնելու շահերը։

...Թանկագին դոկտոր, դուք նոր Ռուսաստանի հին բարեկամն եք, և Ձեր օգնությունը ես համարում եմ կարևոր՝ մեր երկու ժողովուրդների միջև ամենասերտ հարաբերություններ հաստատելու մեծ խնդրի իրականացման գործում»[3]։

«Ես խորապես զգացված եմ նոր Ռուսաստանի նկատմամբ իմ մշտական բարեկամությանը Ձեր տված մեծահոգի գնահատականի համար,— պատասխան հեռագրում Կարախանին գրել է Սուն Յաթ Սենը։— Եվ ես հաստատում եմ, որ մեր երկրների իսկական շահերը պահանջում են մշակել ընդհանուր քաղաքականություն»։

Այդ հեռագրում Սուն Յաթ Սենը բարձր է գնահատել Պեկինի կառավարության հետ բանակցությունների ընթացքում Կարախանի արած այն հայտարարությունը, որ Չինաստանի նկատմամբ վարվող քաղաքականության մեջ «Ռուսաստանը երբեք չի հետևի ԱՄՆ-ի օրինակին...

Ռուսաստանը հրաժարվում է բոլոր կոնցեսիաներից ու արտոնություններից, որոնք խախտում են չին ժողովրդի սուվերենությունն ու շահերը։ Չինաստանի հետ ունեցած իր հարաբերություններում Ռուսաստանը հաստատում է լրիվ և բացարձակ հավասարության սկզբունքը»։ Սուն Յաթ Սենը Կարախանին հղած հեռագրում գրում է. «Չին ժողովրդի անունից ես պետք է ողջունեմ և շնորհակալություն հայտնեմ Ձեր քաղաքական ռեալիզմի այդ հիշարժան դասի համար, որը տրվել է Պեկինի այժմյան տերերի այդ հնազանդ սպասավորին»[4]։

---

2 Նույն տեղում, էջ 10։

3 Документы внешней политики СССР. Т. VI, М., 1962, с. 435.

4 Նույն տեղում, էջ 436։

Հակառակ Պեկինի ղեկավարների ցանկության, որոնք ծառայում էին իմպերիալիստական տերություններին, Չինաստանի առաջադեմ հասարակությունը պնդում էր անհապաղ պայմանագիր կնքել Խորհրդային Միության հետ։ Ամենուրեք տեղի էին ունենում ժողովներ, որոնցում ընդգծվում էր նոր Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունները շուտափույթ վերականգնելու գաղափարը։ Դոմինդանի առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1924 թ. հունվարի վերջերին Կանտոնում, արտահայտեց իր սկզբունքային վերաբերմունքը մեր երկրի նկատմամբ։ Լ. Մ. Կարախանին համագումարի հղած հեռագրում, որը գրել էր Սուն Յաթ Սենը, նշվում է. «Համագումարը անկեղծորեն հույս է գնում բոլոր երկրների ժողովուրդների համակրանքի վրա և երախտապարտ է ռուս ժողովրդին, որն առաջինը արտահայտեց այդպիսի զգացմունքներ։ Չինաստանի և Ռուսաստանի ժողովուրդները պետք է գործեն համատեղ, ընթանալով ազատության և արդարության ուղիով։ Դոմինդանի համաչինական համագումարի անունից եղբայրական ողջույն եմ հղում մեծ հարևանին՝ Խորհրդային Ռուսաստանին»[5]։

Այն օրերին Լ. Մ. Կարախանը անխոնջ աշխատանք էր կատարում Խորհրդային կառավարության ցուցումները իրականացնելու ուղղությամբ։ Նա հանդես բերեց ականավոր դիվանագետի կարողություններ, որը և, վերջապես, 1924 թ. մայիսի 31-ին հանգեցրեց «ԽՍՀՄ-ի և Չինական հանրապետության միջև հարցերի կարգավորման համար ընդհանուր սկզբունքների վերաբերյալ համաձայնագրի» ստորագրմանը։

Լ. Մ. Կարախանին զբաղեցնում էին ոչ միայն «զուտ» չինական գործերը։ Լինելով Պեկինում, նա բանակցություններ էր վարում Ճապոնիայի հետ, որոնք խորհրդային դեսպանի դիվանագիտական կարողության և արվեստի շնորհիվ ավարտվեցին 1925 թ. հունվարի 20-ի պայմանագրի կնքմամբ։

Լև Միխայլովիչ Կարախանի Մոսկվա վերադառնալուց հետո, Գ. Վ. Չիչերինը, որը արտասահման էր մեկնել բուժման, Կարախանին խնդրեց անհապաղ զբաղվել ժողկոմատի Արևելքի գործերի հարցերով։

Չիչերինի առաջարկությամբ Արտգործժողկոմատի կոլեգիան որոշում ընդունեց այն մասին, որպեսզի Լ. Մ. Կարախանը նրան փոխարինի հիվանդության ժամանակաընթացքում։ Շուտով Կարախանը պաշտոնապես աշխատանքի թողնվեց Մոսկվայում, վարելով արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալի պարտականությունները։

1925 թ. վերջին Չինաստանում դրությունը փոխվելու կապակցությամբ որոշում ընդունվեց Կարախանի անհապաղ Պեկին վերադառնալու մասին։ Նորից Պեկին գալով՝ Լ. Մ. Կարախանը, խորհրդային մյուս դիվանագետները ստիպված եղան անհավատալի ջանքերի գնով, երբեմն կյանքը վտանգի ենթարկելով հետևողականորեն հասնել խորհրդային կառավարության դիրեկտիվների կենսագործմանը, խորհրդա-չինական հարաբերությունների ամրապնդմանը։

1926 թ. օգոստոսին Կարախանը վերջնականապես վերադարձավ Մոսկվա։ Հետագայում նա այցելել է Իրան և Թուրքիա, 1929 թ. ստորագրել է խորհրդա-թուրքական համաձայնագիր՝ բարեկամության և չեզոքության վերաբերյալ պայմանագիրը երկարաձգելու մասին, զանազան բանակցություններում եղել է խորհրդային պատվիրակությունների կազմում, մասնակցել է միջազգային հանդիպումների, բազմիցս կատարել ժողկոմի պարտականությունները։

1921 թ. աշնանը Լ. Մ. Կարախանը լիազոր ներկայացուցիչ էր նշանակվել Լեհաստանում։ Չնայած այդ երկրում գտնվելու կարճ ժամկետին (1922 թ. հունվարին Կարախանը նորից ետ է կանչվում Մոսկվա), նա կարողանում է լեհական կառավարության հետ համաձայնագիր կնքել երկրից հակահեղափոխական, հակասովետական գործիչներին (Սավինկովին, Պետլյուրային և մյուսներին) արտաքսելու մասին։ Այն ժամանակ դա կարևոր նշանակություն

[5] Նույն տեղում։

ունեցավ Լեհաստանից սպիտակգվարդիական ջոկատների մշտական հարձակումները դադարեցնելու գործում։

Մոսկվա վերադառնալուց հետո, երեսուներեքամյա Կարախանը ժողկոմ Չիչերինի՝ Ճենովայի կոնֆերանսին մեկնելու կապակցությամբ, մինչև 1922 թ. վերջը կատարեց ժողկոմի պարտականությունները։

1925 թ. մնալով Չինաստանում որպես ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչ, Լ. Մ. Կարախանը միաժամանակ նշանակվեց արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ։ 1930 թ. նա ժողկոմի երկրորդ տեղակալը և ՌԽՖՍՀ կառավարությանն առընթեր Արտգործժողկոմատի լիազորն էր։

1934—1937 թվականներին Լ. Մ. Կարախանը Խորհրդային Միության լիազոր ներկայացուցիչն էր Թուրքիայում։ Կարախանի գործունեության այս ժամանակաշրջանը այդ երկրում խորհրդային պետության շահերի պաշտպանության ուղղությամբ դիվանագիտական ակտիվ գործունեության, խորհրդա-թուրքական հարաբերությունները պահպանելու համար լուրջ ջանքերի գործադրման ժամանակաշրջան էր։

1930-ական թթ. կեսերին նախանշվում էր խորհրդա-թուրքական հարաբերությունների վատացում։ Օտարերկրյա իմպերիալիստների աջակցությամբ Թուրքիայում էՀ ավելի ակտիվ սկսեցին գործել ծայրահեղ հեթադիմական շրջանները, զգալի հետք թողնելով թուրքական կառավարության արտաքին քաղաքականության վրա։ Թուրքիան բացահայտորեն ոտք գրեց իմպերիալիստական տերությունների հետ բլոկ կազմելու ուղին։ Քաղաքական այդպիսի բարդ պայմաններում Լ. Մ. Կարախանը ԽՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեի 1934 թ. հուլիսի 29-ի որոշմամբ նշանակվեց Թուրքիայում ԽՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան։

1935 թ. վերջերից առաջին անգամ սկսեցին զգացվել Թուրքիայի արտաքին քաղաքականության բուն հիմքերի շեշտակի փոփոխությունները։ Հաբեշստանի վրա Իտալիայի հարձակումից հետո Միջերկրական ծովի ավազանում դրությունը արտաքովոր տագնապալի դարձավ։ Թուրքիան որոշակի վախ էր զգում իտալական հնարավոր ագրեսիայի հանդեպ։ Այդ պայմաններում կանխատեսվում էր Թուրքիայի մերձեցումն Անգլիայի հետ, նրա ներգրավումը բրիտանական արտաքին քաղաքականության ոլորտը։

Ինչպես հայտնի է, Անտանտի տերությունների կողմից, առանց ԽՍՀՄ-ի մասնակցության, նեղուցների ռեժիմի վերաբերյալ կնքված Լոզանի պայմանագիրը չէր ապահովում Թուրքիայի անվտանգությունը։ Այդ պատճառով էլ 1936 թ. ապրիլին Թուրքիան առաջարկեց նոր կոնֆերանս հրավիրել Լոզանի ռեժիմը վերանայելու համար։

ԽՍՀՄ դեսպան Լ. Մ. Կարախանը խորհրդային կառավարությանը պարբերաբար իրազեկ էր պահում Մոնտրյոյում (Շվեյցարիա) գումարվելիք կոնֆերանսի նախապատրաստության, արևմտյան տերությունների դիվանագիտական բարդ խաղի մասին, որոնք ձգտում էին ԽՍՀՄ-ի թիկունքում իրենց օգտին վճռել սևծովյան նեղուցների հարցը։

Հիմնվելով ԽՍՀՄ դեսպանության առաջարկությունների վրա, Թուրքիայի նկատմամբ մեր վարած քաղաքականությանը համապատասխան, Խորհրդային Միությունն առաջինը համաձայնություն տվեց նեղուցների վերաբերյալ նոր կոնֆերանս հրավիրելու Թուրքիայի առաջարկությանը։

Մոնտրյոյի կոնֆերանսում, որը տեղի ունեցավ 1936 թ. հունիս-հուլիսին, սուր բանավեճ ծավալվեց այն կապակցությամբ, որ Մեծ Բրիտանիան փորձ էր անում սևծովյան և ոչ սևծովյան տերությունների «հավասարության» անվան տակ սահմանափակել Բոսֆորով և Դարդանելով խորհրդային ռազմանավերի անցնելու իրավունքը։ Դրությունը բարդացել էր նաև նրանով, որ թուրքական պատվիրակությունը պայմանավորվել էր Մեծ Բրիտանիայի պատվիրակության հետ։ Անկարայում ԽՍՀՄ դեսպան Լ. Մ. Կարախանը խիստ դատապարտեց թուրքական պատվիրակության նման վարքագիծը։

ԽՍՀՄ-ի կայուն դիրքը կանխեց կոնֆերանսի ձախողումը և ապահովեց

համաձայնեցված որոշումների ընդունումը։ Նեղուցների ռեժիմի վերաբերյալ նոր կոնվենցիայի համապատասխան Թուրքիան իրավունք ստացավ վերառազմականացման ենթարկել նեղուցների գոտին։ Բոլոր երկրների առևտրական նավերը իրավունք ստացան ազատորեն անցնել նեղուցներով խաղաղ և պատերազմական ժամանակ։ Սևծովյան տերությունները խաղաղ ժամանակ նեղուցներով կարող էին անցկացնել իրենց բոլոր կարգի ռազմանավերը։ Բոսֆորի և Դարդանելի ռեժիմի վերաբերյալ նոր կոնվենցիայի ընդունումը խորհրդային դիվանագիտության նոր հաջողությունն էր։

Մոնտրյոյում կայացած կոնֆերանսը շրջադարձային կետ հանդիսացավ վտանգավոր տենդենցների զարգացման գործում, որոնք ավելի վաղ նկատվում էին թուրքական արտաքին քաղաքականության մեջ։ Այն տարիների դիվանագիտական նյութերի և փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև թուրքական դիվանագիտությունը խոսքով հայտարարում էր, որ Թուրքիայի քաղաքականության մեջ ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել և որ խորհրդա-թուրքական տարաձայնությունները Մոնտրյոյի կոնֆերանսում միայն թյուրիմացության արդյունք էին և որ թուրքական կառավարությունը առաջվա նման ԽՍՀՄ-ի հետ բարեկամությունը համարում է իր քաղաքականության անփոփոխ սկզբունքը, սակայն իրականում վարում էր իր տրադիցիոն խորամանկահյուս դիվանագիտությունը արևմտյան տերությունների և, առաջին հերթին, Անգլիայի հետ շողոքորթելով ի վնաս ԽՍՀՄ-ի շահերի։ Թուրքիայի մինիստրների խորհրդի նախագահ Ինենյուն Մոսկվայի իր դեսպանին ուղարկած հեռագրում փորձում էր ԽՍՀՄ-ին հավաստիացնել նրա հետ բարեկամությանը հավատարիմ լինելու մեջ, և այն բանում, որ Թուրքիան երբեք չի հարի ԽՍՀՄ-ի շահերի դեմ ուղղված որևէ ձեռնարկման։

Մոնտրյոյի կոնֆերանսի նախօրյակին Լ. Մ. Կարախանը ԽՍՀՄ Արտգործժողկոմատին հաղորդեց այն մասին, որ թուրքական մինիստր Արասը «Աթաթուրքի և Ինենյուի հետ խորհրդակցելու շնորհիվ վերադարձավ թուրքական նախկին առաջարկությանը՝ նեղուցների վերաբերյալ համաձայնագրի կնքմանը, որի էությունն այն է, որ մեզ կամ թուրքերին սպառնալու դեպքում մենք կօգնենք միմյանց՝ նեղուցները պաշտպանելու։ Արասը ընդգծել է, որ մեզ հետ միայն այդպիսի համաձայնությունը Թուրքիան կդարձնի կայուն և նեղուցներում կապահովի այնպիսի ռեժիմ, որը միատեսակ շահավետ կլինի երկու կողմի համար»[6]։

Մի փոքր սվելի ուշ, Մ. Մ. Լիտվինովը ժնևից ԽՍՀՄ Արտգործժողկոմատին հաղորդեց, որ Մոնտրյոյում գտնվող մինիստր Արասը «ժխտում է նեղուցների փոխադարձ պաշտպանության առաջարկությանը վերաբերող Կարախանի հաղորդումը» և պնդում է, որ «ինքը խոսել է փոխադարձ օգնության պայմանագրի մասին»[7]։

Միանգամայն հայտնի դարձավ, որ Թուրքիան իր արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերում հետևում է իր արևմտյան պարտնյորների, և, մասնավորապես, Անգլիայի գծին։ Այդ մասին Մոսկվայում թուրքական դեսպանին ուղղակիորեն հայտարարվեց, որ Թուրքիան ներկայումս իր արտաքին քաղաքականության մեջ զրկված է լրիվ ազատությունից և որ նա ըստ համաձայնության կամ կամովին հարկադրված է հաշվի առնել ուրիշ կառավարությունների կարծիքը[8]։

1936 թ. հոկտեմբերի վերջին Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը ԽՍՀՄ դեսպանատանը այցելեց հիվանդ Կարախանին։ Իր ընդարձակ մենախոսությունում մինիստրը նորից խոսում է պայմանագրի մասին. «Անհրաժեշտության դեպքում Թուրքիան չի կարող օգնել ավելի, քան ագրեսորի նավատորմի համար նեղուցները փակելով, Թուրքիան դեռևս բավարար չափով

---

6 Документы внешней политики СССР. Т. XIX. М., 1967, с. 753.

7 Նույն տեղում։

8 Տե՛ս նույն տեղում, էջ 502։

չի զինված, որպեսզի գործի իր տերիտորիայի սահմաններից դուրս»։

Լ. Մ. Կարախանը կռահեց Թուրքական կառավարության մանյովրը։ Նա ԽՍՀՄ Արտգործժողկոմատ հաղորդեց Արասի հետ ունեցած իր զրույցի մասին, որի ընթացքում նա ուղղակի ասաց, որ Թուրքերը այն «պայմանագրի առթիվ, որը հենց իրենք են առաջարկել, խորհրդի համար դիմել են անգլիացիներին։ Խորհուրդ են ստացել մեզ հետ համաձայնության չգալ, մեզնից թաքցնելով Անգլիայի հետ բանակցությունների փաստը»[9]։

Կարախանի այդ կանխագուշակումը հաստատվեց Ինենյուի հետ նրա զրույցից մի քանի օր հետո, որին խորհրդային դեսպանը հայտարարեց. «Մենք եվրոպական մի մայրաքաղաքից տեղեկություն ենք ստացել, որն ուղղակի ասում է, թե մեզ հետ կնքվելիք պայմանագրի կապակցությամբ Թուրքական կառավարությունը հարցրել է անգլիական կառավարության կարծիքը և խորհուրդ է ստացել մեզ հետ պայմանագիր չկնքել»։ Ինենյուն չբողոքեց, հաղորդել է Կարախանը, այլ սահմանափակվեց միայն հանդիմանելով, որ «իրենք, իհարկե, կարծիքներ են փոխանակում միջազգային տարբեր հարցերի շուրջը»[10]։

Թուրքերը, գիտակցելով, որ ԽՍՀՄ-ի հետ վարում են երկակի քաղաքականություն, ամեն կերպ փորձում էին մեղմացնել ստեղծված վիճակը, որը առաջացել էր ԽՍՀՄ-ի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ իրենց արտաքին գործերի մինիստրի չմտածված հայտարարության հետևանքով։ 1936 թ. նոյեմբերի 2-ին Աթաթուրքը մասնակցեց ԽՍՀՄ Օսոավիաքիմի պատվիրակության պատվին խորհրդային դեսպանատանը կազմակերպված ընդունելությանը։ Կարախանի հետ ունեցած զրույցի ժամանակ Թուրքական հանրապետության ղեկավարը ընդգծեց. «Ես մեջլիսում խոսել եմ ԽՍՀՄ-ի հետ բարեկամության մասին և մեկ անգամ ևս կրկնում եմ՝ մենք երբեք, երբեք առաջինը չենք բաժանվի մեր բարեկամներից։ Ինչպես էլ որ շարունակվեն իրադարձությունները, բարեկամությունը մնում է բարեկամություն»[11]։ ԽՍՀՄ Արտգործժողկոմատին հղած հեռագրում Կարախանը արդարացիորեն դրել է, որ Աթաթուրքը դեսպանություն գալով «փորձում էր մեղմացնել դրությունը, որն ստեղծվել է «Արասի դիվանագիտական խաղի հետևանքով»։

Բացահայտելով Թուրքական մանյովրի էությունը, Կարախանը կառավարության ղեկավար Ինենյուին հաստատորեն հայտարարեց. «Ինձ ոչ մի չափով չի անհանգստացնում, որ Թուրքիան գնահատում է Անգլիային, ձգտում է նրան մոտիկ լինել, չի ցանկանում անել ոչ մի բան, որը Անգլիային կարող էր վանել Թուրքիայից, մասնավորապես հրաժարվում է մեզ հետ պայմանագիր կնքելուց. այդպես մանյովրելով, նա նկատի ունի, որ Անգլիան կապահովի Թուրքիայի անվտանգությունը։ Թուրքական կառավարության գործն է՝ որոշել իր արտաքին քաղաքական քայլերը և վճռել, թե իր համար ինչն է շահավետ։ Բայց մենք մի բան ենք ուզում, որ Թուրքիան մեր հարաբերությունների դատավոր չդարձնի երրորդ պետություններին, իսկ գլխավորը, դա չթաքցնի մեզանից»[12]։

1937 թ. դեկտեմբերին հայտնի դարձավ Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Լ. Մ. Կարախանին հայրենիք ետ կանչելու մասին։ Իմանալով այդ, Թուրքիայի Մինիստրների խորհրդի նախագահը նրան նախաճաշի հրավիրեց։ Կառավարության ղեկավարի հետ ունեցած զրույցի ժամանակ Լ. Մ. Կարախանը մտահոգություն արտահայտեց Թուրքիայի վրա Գերմանիայի աճող ազդեցության առթիվ։ Ինենյուի հետ զրուցելիս նա նկատեց, որ Թուրքիան խաղաղության շահերի օգտին բոլոր ուժերի համախմբման դիրքերից անցնում է դեպի չեզոքության դիրքերը և որ դա համընկնում է ագրեսորների պլաններին՝ չե-

9 Նույն տեղում, էջ 540։

10 Նույն տեղում, էջ 774։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում։

ղոքացնել ըստ հնարավորին ավելի շատ պետություններ, որպեսզի ապահովեն իրենց գործողությունների ազատությունը։

* * *

1936 թ. վերջին, 1937 թ. սկզբին մի շարք բռնություններ կիրառվեցին հայրենիքի հավատարիմ շատ զավակների նկատմամբ, նրանց նկատմամբ, ովքեր ակտիվորեն մասնակցել էին հեղափոխությանը, կանգնած եղել Վ. Ի. Լենինի կողքին։ Չար բախտը չշրջանցեց նաև Լ. Մ. Կարախանին։ 1937 թ. սկզբին Սաալինը սկսեց ղավեր նյութել նաև Կարախանի դեմ։ Փետրվարի սկզբին նա մեկնեց Մոսկվա։ Երկու ամիս հետո Կարախանը նորից վերադարձավ Անկարա, որպեսզի հրաժեշտի այց կատարի Թուրքիայի քաղաքական գործիչներին, խորհրդային նոր դեսպանի վերաբերյալ համաձայնություն վերցնի։ Ժողկոմ Մ. Մ. Լիտվինովը ապրիլի 15-ին Թուրքական դեսպանի հետ զրուցելիս հավաստեց, որ Լ. Մ. Կարախանը հետ է կանչվում ընտանեկան հանգամանքների բերումով։ Դա, իհարկե, իրականությանը չէր համապատասխանում։ Իրականում դա Ստալինի պահնորդության ձեռքով Կարախանի ֆիզիկական ոչնչացման «գործի գցված» պլանն էր։ Միանգամայն հնարավոր է, որ Լիտվինովը չիմանար Կարախանի հետ կանչման իսկական պատճառը։

1937 թ. մայիսյան մի օր Լևոն Կարախանը ժամանեց Մոսկվա և հենց Բելոռուսական կայարանում ձերբակալվեց։ Միառժամանակ հետո, 1937 թ. սեպտեմբերի 20-ին գնդակահարվեց...